ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.05.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/167

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 22.04.2022թ. թիվ 26/26-1/7130-2022 գրությամբ Ավագ Ստեփանյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 15.04.2022թ. թիվ Ե/ՎՈՒ/684-22 գրության հիման վրա, 22.04.2022թ. թիվ 26/26-1/7130-2022 գրությամբ նախաձեռնել է Ավագ Ստեփանյան Ա/Ձ-ին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>Ավագ Ստեփանյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Ավագ Ստեփանյան Ա/Ձ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ավագ Ստեփանյան Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/167 ընթացակարգի շրջանակներում 25.05.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 15.04.2022թ. թիվ Ե/ՎՈՒ/684-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ 2022թ-ի ապրիլի 4-13-ը, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում ժամը 10:00-ին տեղի է ունեցել նյութերի և սարքավորումների ձեռքբերման ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-22/52 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը:

«ԱՎԱԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ» Ա/Ձ-ի (ՀՎՀՀ՝ 40071575, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բրյուսովի փ/շ 165ա, բն. 27, հեռ.՝ +37494566889; էլ. փոստի հասցե՝ avag.stepanyan8414@gmail.com) կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «ԱՎԱԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի սյունակներում լրացված տեղեկատվությունը և սյունակի անվանատողը չեն համապատասխանում միմյանց:

Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և 07.04.2022թ-ին համակարգի միջոցով՝ ծանուցմամբ «ԱՎԱԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ» Ա/Ձ-ին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով սահմանված պահանջները:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «ԱՎԱԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից 11.04.2022թ-ի դրությամբ հրավերում նշված էլեկտրոնային փոստի հասցեին շտկված փաստաթղթեր չեն ներկայացվել:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «ԱՎԱԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ» Ա/Ձ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները:

Համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ «ԱՎԱԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաները ներառված են հաստատված գնումների պլանում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/167 ընթացակարգի շրջանակներում 25.05.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/167 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/167 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպվել է «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-22/52» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ավագ Ստեփանյան Ա/Ձ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 04.04.2022թ. հայտերի գնահատման նիստում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ավագ Ստեփանյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի սյունակներում լրացված տեղեկատվությունը և սյունակի անվանատողը չեն համապատասխանում միմյանց:

3. Նույն արձանագրության համաձայն՝ 07.04.2022թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 07.04.2022թ. ծանուցել է Մասնակցին արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

5. Նույն արձանագրության համաձայն՝ 11.04.2022թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ավագ Ստեփանյան Ա/Ձ-ի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները և 13.04.2022թ. որոշում կայացրել Մասնակցի հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.04.2022թ. թիվ 26/26-1/7130-2022 գրությունը, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 15.04.2022թ. թիվ Ե/ՎՈՒ/684-22 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից

պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե ***հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ***, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: ***Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:***

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա

նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպվել է «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-22/52» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ավագ Ստեփանյան Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 04.04.2022թ. հայտերի գնահատման նիստում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ավագ Ստեփանյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի սյունակներում լրացված տեղեկատվությունը և սյունակի անվանատողը չեն համապատասխանում միմյանց:

Նույն արձանագրության համաձայն՝ 07.04.2022թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 07.04.2022թ. ծանուցել է Մասնակցին արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

Նույն արձանագրության համաձայն՝ 11.04.2022թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ավագ Ստեփանյան Ա/Ձ-ի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները և 13.04.2022թ. որոշում կայացրել Մասնակցի հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի ***<u>նորմը մեկնաբանվում է</u>՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ <u>ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից,</u>*** ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն

նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

<u>Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:</u>

Այսինքն՝ Կարգի 41-րդ կետով սահնմանված է, հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարի համար էլեկտրոնային եղանակով <u>նույն օրը</u> դրա մասին մասնակցին <u>ծանուցելու իմպերատիվ պահանջ, որի չպահպանման դեպքում, կարող են անտեսվել այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը և հանգեցնել սխալ մեկնաբանման:</u>

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը ***նույն օրը*** դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, մինչդեռ՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

կողմից 04.04.2022թ. նիստի ընթացքում Մասնակցի հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ, սակայն արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ Մասնակիցը նույն օրը՝ ***04.04.2022թ.,*** ծանուցվելու փոխարեն ծանուցվել է ***07.04.2022թ., որպիսի պայմաններում Մասնակիցը զրկվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավունքներն իրացնելու, այն է՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու հնարավորությունից:***

Վերոգրյալ փաստական հանգամանքների ուժով՝ գտնում եմ, որ Պատվիրատուի կողմից Կարգով սահմանված իմպերատիվ պահանջների խախտմամբ անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումն իրականացնելու արդյունքում ծագած բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Մասնակցի և հանգեցնել վերջինիս նկատմամբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման հիմքով պատասխանատվության միջոցի կիրառմանը, այն է՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 22.04.2022թ. թիվ 26/26-1/7130-2022 գրությամբ Ավագ Ստեփանյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**